



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

**ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ.
ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ**

Հեղինակներ՝

ԱԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՌԵՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևան
Հունիս, 2020թ.

*Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում:
Ձեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:*

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԳԼՈՒԽ 1: ՀՀ-ՈՒՄ ԿԶՆ-ԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	9
1.1. ԿԱՐՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ 2015 Թ.-ԻՑ Ի ՎԵՐ ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.....	10
1.2. ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՇԱՃ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ.....	14
1.3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	17
1.4. ԿԶՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ.....	19
1.5. ԿԶՆ-ՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	21
1.6. ԿԶՆ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	23
ԳԼՈՒԽ 2: ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 16-ՐԴ ՆՊԱՏԱԿԻ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	24
2.1. ԿԶՆ 16-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	25
2.2. ԿԶՆ 16-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՐԱ	26
2.3. ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ	28
ԱՄՓՈՓՈՒՄ	38

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում:

Նախաբանի շրջանակում անհրաժեշտ է անդրադարձ կատարել հետազոտության թեմայի արդիականությանն ու դրա նպատակներին եւ խնդիրներին, ինչպես նաեւ վերջինիս իրականացման մեթոդաբանությանը: Այսպես.

Հետազոտության թեմայի արդիականությունը: 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներն (այսուհետ՝ ԿԶՆ)՝ ընդունված աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015թ. սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ: Առաջիկա 15 տարիների ընթացքում՝ առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչ ոք չանտեսվի¹:

Թեև կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, սակայն ՄԱԿ-ի անդամ երկրների կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ և մշակել ազգային ծրագրեր այդ 17 նպատակներին հասնելու համար: Հարկ է նշել, որ վերը նշված 17 նպատակներն իրենց հերթին բաղկացած են համապատասխան թիրախներից և ցուցիչներից: ՄԱԿ-ի անդամ պետություններն ազգային մակարդակում պետք է մշակեն համապատասխան ծրագրեր և միջոցառումներ այդ 17 նպատակներին հասնելու համար:

¹ <https://www.un.am/hy/p/sustainabledevelopmentgoals>

Սույն հետազոտության արդիականությունը սերտորեն եւ անմիջականորեն կապված է նաեւ նոր կորոնավիրուսով՝ COVID-19-ով պայմանավորված իրողությունների հետ: Թերեւս անհերքելի է այն փաստը, որ պանդեմիա հռչակված այս նոր կորոնավիրուսն էական հետեւանքներ է թողնելու պետությունների կայուն զարգացման հեռանկարների վրա՝ խաթարելով առողջապահական, տնտեսական, իրավական, կրթական եւ այլ կաւորագույն համակարգերի անխափան աշխատանքները: Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական հաղորդագրության² ԿԶՆ-ների տեսանկյունից կորոնավիրուսը սպառնալիք է հանդիսանում հետեւյալ Նպատակների իրագործման համար. 3՝ առողջապահություն եւ բարեկեցություն, 4՝ որակյալ կրթություն, 5՝ գենդերային հավասարություն, 6՝ մաքուր ջուր եւ սանիտարական պայմաններ, 8՝ արժանապատիվ աշխատանք եւ տնտեսական աճ, 10՝ կրճատել անհավասարությունը երկրների ներսում եւ դրանց միջեւ, 16՝ խաղաղություն, արդարադատություն եւ ամուր հաստատություններ: Միաժամանակ, չնայած գլոբալ մակարդակով կորոնավիրուսի կողմից պետություններին հասցված աղետալի եւ ծանր հետեւանքներին, կորոնավիրուսային պանդեմիան պետք է դիտարկել որպէս հնարավորություն արժեւորելու եւ խթանելու Կայուն զարգացման նպատակների իրագործումը՝ հիմք ընդունելով հայտնի բանաձը՝ *ոչ ոք չպետք է անտեսվի*:

Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով ՄԱԿ-ի անդամ պետություն և միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, պետք է ցուցաբերի անհրաժեշտ պատրասակամություն և քաղաքական կամք՝ պատշաճ կերպով մշակելու և ազգայնացնելու ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակները՝ հասնելու վերջնական նպատակի՝ այն է՝ ոչ ոք չի անտեսվել:

Այս համատեքստում, ՀՀ կառավարությունը 2015թ. սեպտեմբերին ստորագրեց «Օրակարգ 2030-ն» ու ստանձնեց 17 ԿԶՆ-երին առնչվող հանձնառությունների

² <https://www.un.org/en/un-coronavirus-communications-team/un-working-fight-covid-19-and-achieve-global-goals>

կատարումը: 2015 թվականի մարտի 9-ին ՀՀ վարչապետի կողմից ձևավորվեց ԿԶՆ-ների ազգային խորհուրդը և հաստատվեց վերջինիս աշխատակարգը³:

2017թ. փետրվարի 21-ին ՀՀ վարչապետի որոշմամբ⁴ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով: 2017թ. մարտին կայացած Միջգերատեսչական հանձնաժողովի ընդլայնված նիստի արդյունքներով ձևավորվեցին ոլորտային Ենթախմբեր՝ սոցիալական, տնտեսական, էկոլոգիական, իրավական և ժողովրդավարական հավասարության: Այնուհետև, ոլորտային Ենթախմբերն իրենց հերթին բաժանվեցին աշխատանքային խմբերի՝ համապատասխան նպատակների ազգայնացման ու նրանց համար ցուցանիշների ճշգրիտ սահմանման նպատակով: Աշխատանքային խմբերը բաղկացած էին շահագրգիռ պետական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը համակարգվում էր ՀՀ կառավարության կողմից: Այս կապակցությամբ, պետք է փաստել, որ չնայած գործընթացն իրականացվում էր ներառական և մասնակցային եղանակով, այդուհանդերձ ազգայնացման գործընթացում առկա էին մի շարք խոչընդոտներ, որոնք հնարավորություն չէին ընձեռում համապարփակ կերպով մշակելու ազգային թիրախներ եւ չափանիշներ: Այս խնդիրների շարքին կարելի է դասել ազգայնացման մեթոդաբանության եւ միասնական վիճակագրության բացակայությունը, ինստիտուցիոնալ թերի կարողությունները, պետական մարմինների միջեւ համակարգման ոչ բավարար մակարդակը եւ այլն:

2017թ. տեղի ունեցած գործընթացներն այդպես էլ չստացան իրենց վերջնական հանգուցալուծումը, մասնավորապես, Ենթախմբերի կողմից իրականացված ազգայնացման աշխատանքները մնացին թղթի վրա գրված եւ չստացան միս ու արյուն: Այս ամենն ունի մի քանի բացատրություն: Մի կողմից պետական կառավարման մարմինների ոչ բավարար կարողությունները, մյուս կողմից

³ ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 9-ի թիվ 167-Ս որոշում

⁴ ՀՀ վարչապետի 2017 թվականի փետրվարի 21-ի թիվ 155-Ս որոշում

գործընթացի վերաբերյալ ոչ բավարար տեղեկացվածության մակարդակը: Այս ամենին, անշուշտ, պետք է ավելացնել նաև 2018թ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, որոնք վերջնականապես կասեցրեցին ազգայնացման գործընթացը:

Թավշյա, ոչ բռնի հեղափոխության արդյունքում ձեւավորված նոր Կառավարությունը վերահաստատեց իր հանձնառությունն իրագործելու ՄԱԿ-ի ԿԶՆ-ները⁵ եւ կյանքի կոչել ազգայնացման գործընթացը: Այս համատեքստում պետք է շեշտել, որ գործընթացը մոտ երկու տարի չստացավ ֆորմալ բնույթ, միայն 2020թ. ապրիլի 22-ին ՀՀ վարչապետի 479-Ա որոշմամբ ստեղծվեց ՀՀ կայուն զարգացման նպատակների խորհուրդը եւ ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ազգային խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 167-Ա որոշումը⁶:

Չնայած այն հանգամանքին, որ ֆորմալ առումով ՀՀ-ում ձեւավորվել է ԿԶՆ խորհուրդը, այնուամենայնիվ դեռևս առկա չեն պետական մակարդակով ընդունված ազգային թիրախներ եւ ցուցանիշներ, ՀՀ կառավարության կողմից մշակված ոլորտային ռազմավարությունները չեն հասցեագրում ԿԶՆ-ները, տվյալները եւ վիճակագրությունը միասնական չեն, պետական մակարդակում առկա է ԿԶՆ-ների իրազեկվածության ցածր մակարդակ, պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների միջեւ բավարար չափով առկա չէ երկխոսություն: Սույն վերլուծությունն ուղղված է լինելու վերը նշված խնդիրների հասցեագրմանը՝ հստակ առաջարկություններով: Սույն հետազոտության շրջանակներում համապատասխան առաջարկությունները կներկայացվեն հստակ օրինակներով՝ հիմք ընդունելով ՄԱԿ Կայուն զարգացման 16-րդ Նպատակը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտության հիմնական նպատակն է վերլուծել ՄԱԿ-ի ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը ՀՀ-

⁵ https://www.un.am/up/file/ARMENIA_SDG_VNR_2018_Highlights-ARM.pdf

⁶ <https://www.e-gov.am/decrees/item/22091/>

ում, մասնավորապես, համապարփակ կերպով վեր հանել ՀՀ կողմից ՄԱԿ-ի ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացի խոչընդոտները, առկա հիմնախնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Կայուն զարգացման 16-րդ Նպատակը: Սույն հետազոտությամբ ներկայացվելու են վերը նշված Նպատակի ազգայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ուղղված առաջարկությունները: Միաժամանակ, սույն վերլուծությունն ապահովելու է առկա պրակտիկ խնդիրների հասցեագրումը՝ գուգորդվելով հստակ և իրագործելի առաջարկություններով:

Այս համատեքստում, սույն հետազոտության արդյունքներով ներկայացված առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ կառավարության կողմից ՄԱԿ-ի ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացն առավել արդյունավետ և համապարփակ կազմակերպելու համար: Այլ կերպ ասած՝ 16-րդ Նպատակի ազգայնացմանն ուղղված առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ մյուս Նպատակների ազգայնացումն առավել արդյունավետ ապահովելու համար:

Սույն հետազոտության **հիմնախնդրի բնույթն ու համատեքստը** կայանում է նրանում, թե ինչպես պատշաճ և արդյունավետ կազմակերպել ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը ՀՀ-ում՝ հիմնվելով պրակտիկ օրինակների և վերլուծությունների վրա:

Սույն հետազոտության կարևորությունն ու արդիականությունը հիմնավորվում է մի շարք հանգամանքներով, մասնավորապես.

- 2015թ. ի վեր ՀՀ-ում ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացի ոչ պատշաճ և արդյունավետ կազմակերպմամբ և իրականացմամբ: Այս համատեքստում, անհրաժեշտ է վեր հանել այն հիմնական պատճառներն ու բացթողումները, որոնք էականորեն ազդել են ազգայնացման պատշաճ կազմակերպման և իրականացման վրա:
- Թիրախների և ցուցիչների ազգայնացման բացակայությամբ, որը ներառում է նաև վիճակագրական տվյալների հավաքագրման խոչընդոտները:
- ԿԶՆ-ների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակով:

- ԿԶՆ-ների հասցեագրման խնդիրը ազգային բարեփոխումների ծրագրերում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Սույն հետազոտությունն իրականացվել է ԿԶՆ-երի ազգայնացման գործընթացի պրակտիկ խնդիրների վեր հանման եւ դրանց հասցեագրման միջոցով՝ սահմանելով հստակ առաջարկություններ: Հետազոտության իրականացման համար հիմք է հանդիսանում գործնականում, մասնավորապես, վերջին երկու տարիների ընթացքում ԿԶՆ-երի ազգայնացման գործընթացում պետական քաղաքականության իրականացման շրջանակներում առաջ եկած խնդիրներն ու խոչընդոտները հասցեագրելու հրամայականը: Ուստի, սույն հետազոտությունն իր բնույթով եւ բովանդակությամբ չի հանդիսանում գիտական կամ գիտահետազոտական աշխատանք, այլ պարունակելով խնդիրների լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ՝ դիտարկվում է որպես քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված փաստաթուղթ կամ հետազոտություն: Վերջինս ազատորեն կարող է օգտագործվել քաղաքականության մշակման համար պատասխանատու պետական մարմինների, քաղհասարակության, ոլորտով հետաքրքրված այլ անձանց եւ կազմակերպությունների կողմից:

ԳԼՈՒԽ 1: ՀՀ-ՈՒՄ ԿԶՆ-ԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԽՈՉՆԴՈՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Սույն գլխի ներքո անդրադարձ կկատարվի 2015թ.-ից ի վեր ՀՀ-ում տեղի ունեցող գործընթացներին, դրա պատշաճ կազմակերպման հիմնական բացթողումներին, այդ գործընթացում պետական մարմինների և քաղաքացիական հասարակության դերին ու նշանակությանը, ազգային ոլորտային ռազմավարություններում ԿԶՆ-ների հասցեագրման հրամայականին, ազգայնացման գործընթացը համակարգող մարմնի գործառույթներին:

1.1. ԿԱՐՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ 2015 Թ.-ԻՑ Ի ՎԵՐ ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

2015 թվականի մարտի 9-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց ՀՀ Կայուն զարգացման ազգային խորհուրդը, որը կոչված էր համակարգելու և ապահովելու Ռիոյի, Հազարամյակի և Յոհաննեսբուրգի հռչակագրերի, Յոհաննեսբուրգի իրականացման պլանի, Օրակարգ 21-ի, «Ապագան, որ մենք ցանկանում ենք» ծրագրային փաստաթղթերի և կայուն զարգացման այլ գործընթացների շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացումը: Խորհրդի նախագահն էր վարչապետը, իսկ անդամները՝ տարբեր նախարարներ, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

2016 թվականին սկսվեց ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը, դրանց ինտեգրումն ազգային ռազմավարական շրջանակի մեջ և վերաբերելի նպատակներից յուրաքանչյուրի կատարման ուղղությամբ առաջընթացի գնահատման և հաշվետվության ներկայացման համակարգի ստեղծումը: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ ԿԶՆ ազգային խորհուրդը որևէ էական ձեռքբերում կամ առաջընթաց չապահովեց ազգայնացման գործընթացում:

2017 թվականի փետրվարին ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որը ղեկավարում էր ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը, իսկ խորհրդի կազմում ընդգրկված էին ոլորտային նախարարությունների ներկայացուցիչներ՝ փոխնախարարների մակարդակով:

2017 թվականի մարտին կայացած Միջգերատեսչական հանձնաժողովի ընդլայնված նիստի արդյունքներով ձևավորվեցին ոլորտային Ենթախմբեր՝ սոցիալական, տնտեսական, էկոլոգիական, իրավական և ժողովրդավարական հավասարության: Այս ոլորտային ենթախմբերի ստեղծման նպատակն էր առավել

համապարփակ և ներառական եղանակով կազմակերպել ազգայնացման գործընթացը: Ավելին, ոլորտային Ենթախմբերն իրենց հերթին բաժանվեցին աշխատանքային խմբերի՝ համապատասխան նպատակների ազգայնացման ու նրանց համար ցուցանիշների ճշգրիտ սահմանման նպատակով: Աշխատանքային խմբերը բաղկացած էին շահագրգիռ պետական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբերը շաբաթական կտրվածքով գումարում էին նիստեր, քննարկում ազգայնացման գործընթացին առնչվող մի շարք հարցեր: Արդյունքում, ազգայնացման համապատասխան փաստաթղթերը ներկայացվեցին ՀՀ կառավարության աշխատակազմ՝ ամփոփելու նպատակով: Այս համատեքստում, կառավարության կողմից փաստաթղթերը ստանալուց հետո որևէ գործողություն չնախաձեռնվեց: Այսպիսով, կարող ենք փաստել, որ ազգայնացման գործընթացը սառեցվեց և դրա հիմնական պատճառներից մեկը թերևս երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններն էին:

2017 թվականին ստեղծվեց Հայաստանի ԿԶՆ ազգային նորարարական լաբորատորիան՝ որպես ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համատեղ նախաձեռնություն⁷:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին երկրում տեղի ունեցավ ոչ բռնի, թավյա հեղափոխություն եւ ձեւավորվեց նոր Կառավարություն ու Ազգային ժողով:

2018 թվականի հուլիսին Հայաստանի նոր իշխանությունը Կայուն զարգացման վերաբերյալ ՄԱԿ-ի բարձրաստիճան քաղաքականության ֆորումում ներկայացրեց իր առաջին Կամավոր ազգային վերանայումը՝ Կայուն զարգացման 2030թ. օրակարգի և Կայուն զարգացման նպատակների իրականացման վերաբերյալ⁸: Ձեկույցում նշվում է, որ 2018թ. ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների արդյունքներով ձևավորված նոր կառավարությունը վերահաստատում է իր հանձնառությունը՝ իրագործելու ԿԶՆ-ները, որոնք

⁷ Լաբորատորիայի մասին առավել մանրամասն կներկայացվի հաջորդիվ

⁸ https://www.un.am/up/file/ARMENIA_SDG_VNR_2018_Highlights-ARM.pdf

համաձայնեցվել են 2015 թ. ՄԱԿ-ի ուղենիշային գազաթնաժողովում, երբ միջազգային հանրությունը միաձայն պարտավորվեց, որ *Ոչ ոք չի անտեսվի*⁹:

2019 թվականի ընթացքում Կառավարության կողմից որևէ էական առաջընթաց կամ գործնական քայլ չիրականացվեց ԿԶՆ-ների ազգայնացման տեսանկյունից, ինչի հիմնական և կարևորագույն պատճառներից մեկն այդ գործընթացը համակարգող պետական մարմնի բացակայությունն էր, որը պետք է առաջնորդեր ԿԶՆ-երի ազգայնացման գործընթացը: Պատճառների թվին կարելի է դասել նաև պետական կառավարման համակարգում ԿԶՆ-ների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկվածության մակարդակը, պետական մարմինների ոչ բավարար կարողությունները, գործընթացի վերաբերյալ պետական քաղաքականության բացակայությունը:

Միայն 2019 թվականի դեկտեմբերին Կառավարության կողմից նկատվեց մի փոքր ակտիվություն, երբ վերջիվերջո գործընթացի համակարգումը վերապահվեց ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակին և նախաձեռնվեց Միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմի թարմացման աշխատանքները, ինչպես նաև գործընթացի ներկա իրավիճակի վերաբերյալ քարտեզագրումը:

2020 թվականի ապրիլի 22-ին ՀՀ վարչապետի 479-Ս որոշմամբ ստեղծվեց ՀՀ կայուն զարգացման նպատակների խորհուրդը եւ ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ազգային խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 167-Ս որոշումը¹⁰: Խորհրդի նախագահի պարտավորությունները դրվեցին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի վրա, իսկ վերջինիս անհատական կազմում ընդգրկվեցին ոլորտային նախարարությունների ներկայացուցիչները՝ նախարարի տեղակալի մակարդակով, ինչպես նաև պետական այլ մարմինների ներկայացուցիչներ: Վերը նշված որոշմամբ ամրագրվեց նաև Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման

⁹ https://www.un.am/up/file/ARMENIA_SDG_VNR_2018_Highlights-ARM.pdf

¹⁰ https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2020/04/479նոն.pdf

պահանջը: Որոշմամբ սահմանվեց, որ Խորհրդի խնդիրներն են սահմանել ՀՀ-ում ԿԶՆ առաջնահերթություններն ու ուղղությունները, դրանք ամրագրել ազգային ռազմավարական ծրագրերում եւ մինչեւ 2030թ. ապահովել ԿԶՆ-ի համալիր իրականացման ընթացքի համակարգումը եւ մշտադիտարկումը:

Ներկայումս մշակվում է «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ը, որը բաղկացած է 16 մեզանպատակներից: Նշված մեզանպատակները ներառում են գրեթե բոլոր ԿԶՆ-ները, բացի այդ ընդգրկում են հավելյալ նպատակներ, ինչպես օրինակ անվտանգությունը: Մեզանպատակները ներառում են կայուն զարգացման հավակնոտ օրակարգը, և հիմնված է լինելու կայուն զարգացման 3 փոխկապակցված տարրի վրա՝ տնտեսական աճ, սոցիալական ինտեգրում և շրջակա միջավայրի պահպանություն: Ինչպես կայուն զարգացման նպատակները այնպես էլ մեզանպատակները անկախ չեն իրարից և պետք է իրագործվեն համալիր մոտեցման հիման վրա:

2020 թվականի ամռանը ՀՀ կառավարությունը պլանավորում է ներկայացնել իր հերթական կամավոր զեկույցը ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացի եւ իրագործման վերաբերյալ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել հետևյալ կարևոր հանգամանքները.

- ՀՀ կառավարությունը 2015 թվականից ի վեր ակտիվորեն աշխատել է ԿԶՆ-ների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ՝ ԿԶՆ-ների իրականացման ինստիտուցիոնալ և համակարգային մոտեցման շրջանակներում: Այնուամենայնիվ, այս մեխանիզմները որևէ էական առաջընթաց չեն ապահովել ազգայնացման գործընթացում:

- 2018թ. թավշյա, ոչ բռնի հեղափոխության արդյունքով ձևավորված նոր կառավարությունը հանձնառություն ստանձնեց ազգայնացնելու և իրագործելու ՄԱԿ-ի գլոբալ նպատակները՝ դրանք արտացոլելով բարեփոխումների հիմքում:

1.2. ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՇԱՃ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Չնայած ինստիտուցիոնալ կառուցակարգերի առկայությանը և որոշակի ջանքերի գործադրմանը՝ 2015թ. ի վեր ՀՀ-ն էական առաջընթաց չի արձանագրել ՄԱԿ-ի գլոբալ նպատակներն ազգայնացնելու և իրագործելու գործընթացում: Այս ամենի ապացույց կարող են հանդիսանալ հետևյալ հանգամանքները. մինչ օրս ազգային մակարդակում սահմանված չեն 17 գլոբալ նպատակների ազգային թիրախներն ու ցուցիչները, ազգային ռազմավարությունները եւ գործողությունների ծրագրերը չեն հասցեագրում ԿԶՆ-ները, ինստիտուցիոնալ կարողությունները բավարար չեն, իրազեկվածության աստիճանը շատ ցածր է, համակարգման մեխանիզմներն արդյունավետ չեն, վիճակագրական տվյալների հավաքագրման կարողությունները ոչ պատշաճ մակարդակի վրա են: Այս բոլոր երևույթների համադրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ազգայնացման գործընթացը մինչ այժմ բավարար կերպով իրագործված չէ:

Այժմ անհրաժեշտ է վերլուծել այն հիմնական խոչընդոտները և բացթողումները, որոնք հնարավորություն չեն ընձեռել 2015թ. ի վեր արձանագրել կարևոր եւ գործնական ձեռքբերումներ:

Նախ պետք է արձանագրել, որ մինչ այժմ ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացում պետական քաղաքականությունը սահմանափակվել է միայն ինստիտուցիոնալ կառույցների կամ այլ կերպ ասած միջգերատեսչական հանձնաժողովների ստեղծմամբ եւ ոչ ավել: Վերջիններս իրավական ակտերով սահմանված կարգով իրենց իրավասության սահմաններում գումարել են նիստեր, քննարկել ազգայնացման ուղղությունները, առաջնահերթությունները, դրանք ազգային ռազմավարություններում հասցեագրելու եւ մի շարք այլ հարցեր: Չնայած այս ջանքերին, պետք է փաստել, որ այսօր առկա չեն 17 գլոբալ նպատակների ազգային թիրախներն ու ցուցիչները: Ինչու՞ կառավարության այս ջանքերը արդյունք չեն տվել: Այս ամենն ունի սուբյեկտիվ եւ օբյեկտիվ պատճառաբանություններ: Սուբյեկտիվ կողմի տակ կարելի է դիտարկել Կառավարության՝ այդ թվում նաեւ այլ

պետական շահագրգիռ մարմինների աշխատակիցների ոչ հետեւողական եւ ոչ պատշաճ գործունեությունը, գործընթացի վերաբերյալ ոչ ճիշտ ընկալումը, ուժեղ համակարգման եւ մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը եւ այլն: Ինչ վերաբերում է օբյեկտիվ կողմին, ապա այս համատեքստում պետք է առանձնացնել քաղաքական գործոնները, մասնավորապես, նոր իշխանության ձեւավորումը, քաղաքական լիդերների հաճախակի փոփոխությունները՝ իրենց բոլոր հետեւանքներով: Այս պարագայում հարկ է ընդգծել, որ նոր Կառավարությունից պահանջվեց մոտ երկու տարի ժամանակ ազգայնացման գործընթացը վերակենդանացնելու եւ նոր շունչ տալու, որի արդյունքում ձեւավորվեց ԿԶՆ ազգային խորհուրդը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաեւ անցյալի սխալները կրկին անգամ իրագործելուց խուսափելու համար, ինստիտուցիոնալ մակարդակում առաջարկվում է.

- նոր ձեւավորված ԿԶՆ ազգային խորհրդի աշխատանքները դարձնել առավել պրակտիկ եւ թիրախային՝ հզորացնելով մշտադիտարկման եւ համակարգման մեխանիզմները, ինչպես նաեւ Խորհրդի քարտուղարության կարողությունները: Այս համատեքստում կարելուքում է այլ պետությունների փորձի ուսումնասիրությունը, ուսուցողական այցերի կազմակերպումը օտարերկրյա պետությունների համանման կառույցներ, միջազգային կոնֆերանսների, համաժողովների կազմակերպումը եւ այլն:
- Խորհուրդը փուլային տարբերակով դարձնել հզոր եւ կայուն ինստիտուցիոնալ կառույց՝ հաշվի առնելով, որ այն պետք է համակարգի մինչեւ 2030թ. ընկած ժամանակահատվածի բարեփոխումները: Ինչպես փորձը ցույց է տալիս, նմանօրինակ Խորհուրդները մեծապես կախված են լինում որոշ անհատներից կամ աշխատակիցներից, ովքեր ինչ-ինչ պատճառներով կարող են լքել այդ կառույցը: Ուստի, առաջարկվում է դիտարկել այնպիսի մոդելի ներդրում, որը կախված չի լինի որոշ անհատներից կամ քաղաքական իշխանության փոփոխությունից:

- Խորհրդի շրջանակներում հետեւողական եւ ամենօրյա ռեժիմով աշխատանք իրականացնել բոլոր պետական մարմինների ներկայացուցիչների հետ՝ լոբբինգի ենթարկելով ԿԶՆ ազգայնացման գործընթացը:

Բացի վերը նշվածից, որպես բացթողում կարելի է առանձնացնել նաև պետական մակարդակում ԿԶՆ-ների վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածության մակարդակը: Յուրաքանչյուր գործընթացի վերաբերյալ իրազեկվածության եւ հաղորդակցության բավարար մակարդակը ունի կարեւորագույն եւ էական դերակատարում: Կարող ենք փաստել, որ ազգայնացման գործընթացի ոչ պատշաճ կազմակերպման եւ իրագործման վրա էական ազդեցություն է ունեցել ԿԶՆ-ների վերաբերյալ պետական մարմինների շրջանակներում հաղորդակցության բացակայությունը: Այս համատեքստում, **առաջարկվում է** Խորհրդին՝ համագործակցելով ՄԱԿ-ի գրասենյակների հետ, մշակել ԿԶՆ-ների ազգայնացմանն ուղղված լայնամասշտաբ հաղորդակցության ռազմավարություն, որի շրջանակներում պարբերաբար կտրվածքով կիրականացվի հանրային իրազեկման արշավներ եւ այլ միջոցառումներ:

Ազգայնացման գործընթացի երրորդ կարեւորագույն խոչընդոտ կարելի է դիտարկել շահագրգիռ պետական մարմինների աշխատակիցների ոչ բավարար կարողությունները: Կարող ենք փաստել, որ այս գործընթացն իր էությունը հանդիսանալով նոր եւ ոչ այնքան փորձարկված՝ որոշակի խոչընդոտ է հանդիսանում ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչների համար: Պրակտիկ խոչընդոտների շարքին կարելի է դասել միասնական վիճակագրական տվյալների հավաքագրումը, ինչն էական նշանակություն ունի թիրախների եւ ցուցիչների ազգայնացման գործընթացի համար, ազգայնացման գործընթացի նպատակի եւ խնդիրների վերաբերյալ ոչ պատշաճ պատկերացումը, ազգային ռազմավարություններ մշակելու, դրանք մշտադիտարկելու եւ համակարգելու ոչ բավարար կարողությունները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ **առաջարկվում է**.

- պարզեցնել վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթացը, օրինակ մշակել կամ վերանայել համապատասխան իրավական ակտերը,

որոնք կարգավորում են վիճակագրության տրամադրման գործընթացը, ստեղծել էլեկտրոնային գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն առցանց եղանակով ստանալ համապատասխան տվյալներ:

- ուժեղացնել շահագրգիռ պետական մարմինների համապատասխան ներկայացուցիչների կարողությունները ազգային ռազմավարություններ եւ գործողությունների ծրագրեր մշակելու, համակարգելու, մշտադիտարկելու տեսանկյունից՝ կազմակերպելով համապատասխան միջազգային համաժողովներ, կոնֆերանսներ, ուսումնական այցեր եւ այլն:

1.3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ազգայնացման գործընթացում պետական մարմիններն ու քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ունեն էական դերակատարություն եւ նշանակություն: Վերջիններիս համատեղ ջանքերով է հնարավոր գրանցել առաջընթաց այս ոլորտում: 2017թ. տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ քաղհասարակությունը պատրաստակամ է լիովին աջակցել ազգայնացման գործընթացին՝ իր ակտիվ դերակատարումը ցուցաբերելով Ենթախմբերի ներքո ձեւավորված աշխատանքային խմբերի գործունեությանը: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում քաղհասարակության ներկայացուցիչներն առավել ընդհանրական եւ համապարփակ պատկերացում ունեին ազգայնացման գործընթացի վերաբերյալ քան որոշ պետական մարմինների աշխատակիցներ: Ասվածից հետեւում է, որ անհրաժեշտ է լիովին օգտագործել քաղհասարակության ներուժն ու վերջինիս կարողությունները՝ ազգայնացման գործընթացը համակողմանի իրագործելու նպատակով: Այս համատեքստում, թերեւս կարելի է ողջունել Կառավարության այն քայլը, որ նորաստեղծ ԿԶՆ ազգային խորհրդում մատնանշվել է քաղհասարակության ընդգրկման պահանջը: Կառավարության որոշմամբ¹¹ հստակ

¹¹ https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2020/04/479նոն.pdf

սահմանվում է Խորհրդի կազմում հկ-ների ներգրավման մրցույթի եւ ռոտացիայի կազմակերպման կարգը, հկ-ներին եւ հայտերին ներկայացվող պահանջները, հկ-ների ներգրավման ընթացակարգը եւ այլն: Խորհրդի կազմում ներառվելու են ԿԶՆ յոթ բնագավառում գործող հկ-ների ղեկավարներ: Կարող ենք փաստել, որ իրավական առումով հստակ կանոնակարգվել է քաղհասարակության մասնակցության ձեւաչափը ԿԶՆ ազգայնացման գործընթացին: Այս ամենը հաշվի առնելով՝ միայն մնում է հուսալ, որ հկ-ների ներգրավվումը չի կրելու զուտ ֆորմալ բնույթ, այլ իսկապես կայանլու է կառուցողական, համագործակցային եւ ինստիտուցիոնալ ԿԶՆ ազգային խորհուրդ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաեւ նախկին փորձը՝ **առաջարկվում է** Խորհրդի շրջանակներում սերտ եւ փոխշահավետ համագործակցել բոլոր ոլորտային հկ-ների հետ՝ լիարժեք օգտագործելով վերջիններիս գործիքակազմը եւ ներուժն ազգայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով: Հկ-ների հետ համագործակցությունը հնարավորություն կընձեռի հանրության շրջանում բարձրացնել ԿԶՆ-երի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, վերջիններիս հետ համատեղ կազմակերպել ոլորտային հանրային քննարկումներ, կոնֆերանսներ, կլոր-սեղան հանդիպումներ եւ մի շարք այլ օգտակար միջոցառումներ:

Ինչ վերաբերում է շահագրգիռ պետական մարմինների նշանակությանը, ապա պետք է նշել, որ վերջիններս ունեն կենտրոնական դերակատարում ազգայնացման գործընթացում: Մա նշանակում է, որ յուրաքանչյուր պետական մարմին իր իրավասության շրջանակներում պատասխանատու է իր ոլորտին առնչվող ԿԶՆ-ների ազգայնացման եւ դրանք ռազմավարություններում եւ գործողությունների ծրագրերում ամրագելու համար: ԿԶՆ ազգային խորհուրդը կոչված է համակարգելու այդ աշխատանքը, այսինքն՝ ազգայնացման հիմնական աշխատանքների իրականացումը վերապահված է յուրաքանչյուր պետական մարմնին: Այս համատեքստում, Խորհրդի առաջնային գործառույթը պետք է համարվի պետական մարմինների ներկայացուցիչներին պարզ, հստակ եւ համապարփակ կերպով

բացատրությունը գործընթացի նպատակի, խնդիրների ու ուղղությունների վերաբերյալ: Այնուհետև, անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ իրականացնել Խորհրդի կազմում ընդգրկված պետական մարմինների հետ:

Անցյալի փորձը կրկին անգամ իրագործելուց խուսափելու նպատակով՝ **առաջարկվում է** ԿԶՆ ազգային խորհրդին կից ստեղծել համապատասխան ոլորտային աշխատանքային խմբեր, որտեղ փորձագիտական մակարդակով ներգրավված կլինեն պետական մարմինների ներկայացուցիչներ: Այդ աշխատանքային խմբերի հիմնական նպատակը կլինի փորձագետների մակարդակով ԿԶՆ-երի ազգայնացմանն առնչվող հարցերի քննարկումը, համապատասխան լուծումների մշակումը, այնուհետև դրանք Խորհրդի քննարկմանը ներկայացումը: Այս մոդելը հնարավորություն կտա ուժեղացնել պետական մարմինների աշխատակիցների կարողությունները, վերջիններս պարբերական կտրվածքով ներգրավված կլինեն ազգայնացման աշխատանքներում, եւ ի վերջո, փորձագետները կհանդիսանան կոնտակտային անձինք եւ պատասխանատու կլինեն իրենց ոլորտի ազգայնացման աշխատանքների համար:

1.4. ԿԶՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

2017թ. հիմնադրվեց Հայաստանի ԿԶՆ ազգային նորարարական կենտրոնը: Կենտրոնը ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի նախաձեռնությունն է, որին աջակցություն է ցուցաբերում ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը Հայաստանում: Կենտրոնը Կառավարության, քաղաքացիական հասարակության, ակադեմիայի և մասնավոր հատվածի միջև գտնվող նորարարական հանգույց է: Օգտվելով նման բազմաշահառու համագործակցություններից՝ ԿԶՆ կենտրոնը նպատակ ունի բացահայտել Հայաստանի զարգացման ներուժը և արագացնել Օրակարգ 2030-ի իրականացումը¹²:

¹² <https://www.sdglab.am/> մ է ր -մ ա ս ի ն

Ազգայնացման գործընթացն առավել համապարփակ, համակողմանի եւ արդյունավետ իրագործելու նպատակով՝ **առաջարկվում է** սերտորեն համագործակցել Կենտրոնի հետ՝ օգտագործելով վերջինիս գործիքակազմը եւ նորարարական լուծումներ ներկայացնելու կարողությունները: Իսկ ինչպե՞ս եւ ի՞նչ եղանակներով կարող է Կենտրոնն աջակցել ազգայնացման գործընթացին:

ԿԶՆ-երի բարդությունն ու փոխկապվածությունը պահանջում են նոր մոտեցումներ, մեթոդաբանություններ, տվյալների ուժեղ համակարգեր և ինստիտուտներ, որոնք ունակ են տրամադրել ոչ ստանդարտ լուծումներ տրասնֆորմացիոն ազդեցության համար: ԿԶՆ կենտրոնի գործունեության կենտրոնում իր նորարարական մեթոդներն են, որոնք փոխառված են մի շարք ոլորտներից, այդ թվում՝ տվյալագիտությունից, վարքաբանությունից, դիզայն մտածողությունից և համակարգային մտածողությունից:

Կենտրոնի թիմը ակադեմիական հետազոտության և փաստերի օգնությամբ քաղաքականության մշակման գործընթացի մեջ ներմուծում է պատրաստի լուծումներ: Կենտրոնը իրականացնում է փորձարկումներ քաղաքականության մշակման համար տվյալներ տրամադրելու և քաղաքականություն մշակելու համար:

Կենտրոնն ունի սոցիալական, բնապահպանական և տնտեսական մարտահրավերները լուծող նորարարական նախագծերի մեծ պորտֆոլիո:

Կենտրոնի կարելորագույն առաքելություններից մեկն է հանդիսանում նաեւ ոչ ավանդական եղանակների միջոցով որոշակի տվյալների հավաքագրումը, որոնք կարող են էական նշանակություն ունենալ գլոբալ նպատակների ազգայնացման գործընթացում: Այդ ոչ ավանդական եղանակների շարքին կարելի է դասել նորագույն տեխնոլոգիաների, սոցիալական ցանցերի կամ այլ կայքերի օգնությամբ ստացվող տեղեկատվությունը, օրինակ՝ Facebook, e-draft.am կայքերի միջոցով հնարավոր է ձեռք բերել համապատասխան վիճակագրական տվյալներ:

1.5. ԿԶՆ-ՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԿԶՆ-երի ազգայնացման գործընթացն իր հանգուցալուծումը ստանում է այն ժամանակ, երբ դրանք ամրագրվում են ազգային ռազմավարական ծրագրերում եւ գործողությունների ծրագրերում: Նախքան դրանց հասցեագրումը ոլորտային ազգային ռազմավարություններում, անհրաժեշտ է սահմանել ԿԶՆ-երի ազգայնացման առաջնահերթությունները եւ ուղղությունները: Այս գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր գլոբալ նպատակի թիրախների եւ ցուցիչների համար հավաքագրել վիճակագրական տվյալներ, վերլուծել դրանք եւ այնուհետեւ սահմանել ազգային թիրախ եւ ցուցիչ¹³:

Կարող ենք փաստել, որ մինչ այժմ ՀՀ ազգային ռազմավարական ծրագրերը չեն հասցեագրում ԿԶՆ-երը, նրանց միջեւ առկա չէ փոխկապակցվածություն, ինչն էլ թույլ է տալիս ենթադրելու, որ ԿԶՆ ազգայնացման գործընթացն իր հանգուցալուծումը դեռեւս չի ստացել: Թերեւս բացառություն կարող է համարվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված եւ 2019թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարության 1978-Լ որոշմամբ ընդունված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրը: Ռազմավարությամբ ամրագրված յուրաքանչյուր իրավունքի տեսակ հասցեագրում է այս կամ այն Կայուն զարգացման նպատակը: Օրինակ՝ Ռազմավարությամբ նշվում է, որ Կյանքի իրավունքը՝ որպես գերակայություն, եւ դրա ներքո նախատեսված գործողություններն ուղղված են ՄԱԿ-ի կայուն զարգացման թիվ 16 նպատակի իրագործմանը, այն է՝ «Զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը եւ դրանց առնչվող մահերի ցուցանիշը» (16.1): Մեկ այլ օրինակ՝ Կրթության իրավունքի ապահովումը՝ որպես գերակայություն, եւ դրա ներքո նախատեսված գործողություններն ուղղված են ՄԱԿ-ի կայուն զարգացման թիվ 4 նպատակի, այն է՝

¹³ Այս գործընթացի մասին առավել մանրամասն կներկայացվի հաջորդ գլխում

«Ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար եւ խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ» իրագործմանը:

Այս ամենին զուգահեռ, Արդարադատության նախարարությունը ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հետ համատեղ մշակել եւ գործարկել է www.e-rights.am էլեկտրոնային պլատֆորմը¹⁴, որը հնարավորություն է տալիս առցանց ծանոթանալ Ռազմավարությանը եւ Գործողությունների ծրագրին, հետեւել միջոցառումների կատարման ընթացքին, ներկայացնել մեկնաբանություններ գործողությունների վերաբերյալ եւ այլն: Այս պլատֆորմում ներբեռնված Գործողությունների ծրագրի յուրաքանչյուր միջոցառում հասցեագրում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները¹⁵:

Այս փորձը կարելի է գնահատել դրական: Վերջինս կարող է հիմք հանդիսանալ Կառավարության կողմից ընդունվող մյուս բոլոր ոլորտային ռազմավարությունների մշակման համար: Այս գործընթացը շարունակական, իրավական եւ հրամայական դարձնելու գործում կարելուր դերակատարություն պետք է ունենա ԿԶՆ ազգային խորհուրդը: Այս համատեքստում, **առաջարկվում է** ԿԶՆ-երի ազգայնացման առաջնահերթություններն ու ուղղությունները սահմանելուց հետո, դրանք ազգային ռազմավարական փաստաթղթերում հասցեագրելու պահանջը սահմանել իմպերատիվ եղանակով: Միաժամանակ, հիմք ընդունելով վերը նշված փորձը՝ առաջարկվում է ոլորտային ռազմավարական ծրագրերը թվայնացնել եւ ստեղծել համապատասխան էլեկտրոնային պլատֆորմներ, ինչն էականորեն կոյուրիսացնի համակարգման, մշտադիտրակման եւ գնահատման աշխատանքները:

¹⁴ <http://e-rights.am>

¹⁵ <http://e-rights.am/?app=AppEvent>

1.6. ԿԶՆ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Սույն հետազոտության շրջանակներում ինչպես արդեն մի քանի անգամ նշվեց, ԿԶՆ-երի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը թե՛ հանրության, թե՛ պետական մարմինների շրջանում ոչ բավարար է: Այս եզրակացությունը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ դեռևս 2017թ. տեղի ունեցող զարգացումներն ապացուցում էին, որ ոլորտային աշխատանքային խմբերում ներգրավված պետական եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ոչ միանշանակ եւ ոչ բավարար պատկերացում ունեին տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ: Մասնավորապես, դեռևս այդ ժամանակաշրջանում առկա չէր ազգայնացման մեկ ընդհանուր մեթոդաբանություն եւ պետական միասնական ու համակարգված քաղաքականություն, ինչի հիմնական պատճառներից մեկը ԿԶՆ-ների վերաբերյալ ցածր իրազեկվածության մակարդակն էր: Աշխատանքային խմբերի անդամները բավարար չափով տեղեկացված չէին գործընթացի հիմնական խնդիրների եւ նպատակների, ազգայնացման մեթոդաբանության եւ ուղղությունների վերաբերյալ:

Հաղորդակցությունն ու տեղեկատվության տարածումն ունի էական նշանակություն ԿԶՆ-երի ազգայնացման գործընթացի համար: Այս համատեքստում, անհրաժեշտ է պարզ եւ հստակ ձեռով տեղեկացնել հասարակությանը եւ պետական մարմիններին գործընթացի խնդիրների, նպատակների եւ վերջնարդյունքների մասին: Հետեւաբար, **առաջարկվում է** Խորհրդին՝ որպես գործընթացը համակարգող մարմնի, ՄԱԿ-ի գրասենյակների հետ համագործակցությամբ մշակել լայնածավալ ռազմավարական հաղորդակցության պլան, որը կպարունակի հանրային իրազեկման հստակ միջոցառումներ՝ թիրախավորելով բոլոր շահագրգիռ կողմերին: Միայն հաղորդակցության ռազմավարության մշակմամբ եւ իրագործմամբ կարելի է ակնկալել ազգայնացման արդյունավետ գործընթացի կազմակերպում եւ իրականացում: Այդ հաղորդակցության շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել

լայնածավալ տեղեկատվական արշավներ, կազմակերպել հանրային քննարկումներ, կոնֆերանսներ, օգտագործել նորարարական լուծումներ եւ այլն: Հաղորդակցության պլանի կյանքի կոչմանը ակտիվ մասնակցություն պետք է ցուցաբերեն Խորհրդի կազմում ընդգրկված պետական մարմինների եւ հկ-ների ներկայացուցիչները՝ օգտագործելով իրենց բոլոր ռեսուրսները եւ կարողությունները:

ԳԼՈՒԽ 2: ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ 16-ՐԴ ՆՊԱՏԱԿԻ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Սույն Գլխի ներքո կներկայացվի ազգայնացման գործընթացի կազմակերպմանն ուղղված քայլերի հաջորդականությունը, համապատասխան վիճակագրական տվյալների նշանակությունը, համակարգող մարմնի դերակատարությունը՝ որպես օրինակ դիտարկելով ՄԱԿ-ի Կայուն զարգացման 16-րդ Նպատակը, այն է՝ Խաղաղություն, արդարություն եւ ամուր հաստատություններ:

Կայուն զարգացման 16-րդ նպատակը կոչված է խթանելու խաղաղ եւ ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու եւ ներառական հաստատություններ¹⁶:

Այս Գլխի ներքո իրականացված վերլուծությունը հնարավորություն կընձեռի պրակտիկ եղանակով ծանոթանալ ազգայնացման գործընթացի քայլերին, ինչպես նաեւ անալոգիայի միջոցով նույն մոտեցումը կիրառել նաեւ մյուս Կայուն զարգացման նպատակներն ազգայնացնելու համար:

¹⁶ <http://un.am/hy/p/sustainable-development-goal-16>

2.1. ԿԶՆ 16-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացման 16-րդ նպատակը ներառում է 12 թիրախ և 23 գլոբալ ցուցանիշ: ԿԶՆ 16-րդ նպատակի թիրախներից մի քանիսը բազմաբաղադրիչ են, դրանք չափում են այնպիսի ծավալուն հասկացություն, ինչպիսին «կոռուպցիան» է, ինչը հնարավոր չէ համարժեք գնահատել միայն մեկ ցուցանիշով: Ավելին, պաշտոնական գլոբալ ցուցանիշները բավարար չափով չեն ընդգրկում թիրախների հավակնության ողջ շրջանակը: Օրինակ՝ թիվ 16.5 թիրախի նպատակն է էապես կրճատել կոռուպցիայի եւ կաշառակերության «բոլոր ձեւերը», սակայն հաստատված գլոբալ ցուցանիշներով չափվում է միայն կաշառքի դեպքերը պետական պաշտոնատար անձանց եւ հանրության կամ տնտեսվարողների միջեւ: Չկան կառավարությունների ներսում կամ կառավարությունների միջեւ տեղի ունեցող կոռուպցիայի կամ «ոչ կառավարական» կոռուպցիայի այլ ձեւերի չափման ցուցանիշներ: Որոշ թիրախների համար ընտրված գլոբալ ցուցանիշները չեն անդրադառնում կարեւորագույն հիմնախնդիրներին: Օրինակ՝ թիվ 16.4 թիրախի նպատակն է պայքարել կազմակերպված հանցավորության բոլոր ձեւերի դեմ, սակայն չկա պաշտոնական ցուցանիշ, որով չափվում է կազմակերպված հանցավորության մակարդակը, կամ ցուցանիշ, որը վերաբերում է գողացված միջոցների վերականգնմանը եւ վերադարձին: ԿԶՆ 16-ի գլոբալ ցուցանիշներից շատերը հիմնված են այնպիսի տվյալների վրա, որոնք կանոնավոր կերպով չեն մշակվում, կամ ներկայումս կառավարությունը չունի դրանց հավաքագրման հաստատուն մեթոդաբանություն կամ չափանիշներ¹⁷:

Որոշակի դժվարություններ կարող են առաջանալ նաեւ ցուցիչների վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացման գործընթացում, մասնավորապես, այս Գլոբալ նպատակի ներքո առկա են այնպիսի ցուցիչներ, որոնք հնարավոր չէ հավաքագրել այսպես կոչված ավանդական եղանակներով: Օրինակ,

¹⁷ <https://transparency.am/files/publications/1577260261-0-526276.pdf>

16.1.3¹⁸, 16.1.4¹⁹, 16.2.1²⁰, 16.2.3²¹, 16.3.1²², 16.5.1²³, 16.5.2²⁴ եւ այլ ցուցիչների վերաբերյալ վիճակագրական տվյալները կարող են ստացվել հարցումների միջոցով, քանի որ վարչական մարմինների կողմից այդպիսի տեղեկատվություն ընդհանրապես չի հավաքագրվում կամ հավաքագրվում է որոշ կոմպոնենտներով:

2.2. ԿՁՆ 16-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՐԱ

Ինչպես արդեն նշվել է, Կայուն զարգացման 16-րդ նպատակը կոչված է խթանելու խաղաղ եւ ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու եւ ներառական հաստատություններ: Մա նշանակում է, որ այս Գլոբալ նպատակն ուղղված է երկրների արդարադատության եւ դատախիրավական համակարգերի կայուն զարգացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, հաշվետու պետական ինստիտուտների ստեղծմանը: Այս գլոբալ Նպատակի ներքո ամրագրված թիրախներն ու ցուցիչները երկրների համար պետք է հանդիսանան արդարադատության եւ դատախիրավական ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումների հիմնական ելակետային գործոնները եւ այդ բարեփոխումների

¹⁸ Ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բնույթի բռնության ենթարկված բնակչության համամասնությունը նախորդ 12 ամիսների ընթացքում

¹⁹ Իրենց բնակչության տարածքում մենակ քայլելիս իրենց ապահով զգացող բնակչության համամասնությունը

²⁰ 1-17 տարեկան երեխաների համամասնությունը, ովքեր անցյալ ամսում խնամատարների կողմից ենթարկվել են որևէ ֆիզիկական պատժի և (կամ) հոգեբանական ագրեսիայի

²¹ 18-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց համամասնությունը, ովքեր մինչև 18 տարեկանը ենթարկվել են սեռական բռնության

²² Դատավճիռ չստացած ազատազրկվածները՝ արտահայտված որպես բանտարկյալների ընդհանուր թվի տոկոս

²³ Պետական պաշտոնյայի հետ առնվազն մեկ անգամ շփում ունեցած անձանց համամասնությունը, ովքեր կաշառք են տվել պետական պաշտոնյային, կամ այդ պետական պաշտոնյաները նրանցից կաշառք են պահանջել նախորդ 12 ամսում

²⁴ Պետական պաշտոնյայի հետ առնվազն մեկ անգամ շփում ունեցած բիզնեսների համամասնությունը, որոնք կաշառք են տվել պետական պաշտոնյային, կամ այդ պետական պաշտոնյաները նրանցից կաշառք են պահանջել նախորդ 12 ամսում

իրականացման շարժիչ ուժը: Կայուն զարգացման 16-րդ Նպատակը հանդիսանում է վճռական ելակետ կառավարությունների բարեփոխումների օրակարգի համար: Պետությունները մինչև 2030թ. պետք է ձգտեն հասնել այդ զլոբալ Նպատակի իրագործմանը:

Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա հեղափոխությունից հետո ձևավորված Կառավարությունը դատաիրավական եւ արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացումը, ինչպես նաեւ կոռուպցիայի դեմ պայքարը հռչակեց իր գործունեության կարելորագույն առաջնահերթություններից մեկը: Այս համատեքստում, 2019թ. ընթացքում Կառավարության կողմից հաստատվեցին դատաիրավական բարեփոխումների եւ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունները եւ համապատասխան գործողությունների ծրագրերը, որոնք նախանշում են առաջիկա տարիների ընթացքում վերը նշված ոլորտներում Կառավարության գործունեության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները: Կարող ենք փաստել, որ այդ ռազմավարական փաստաթղթերը հանդիսանում են այդ ոլորտներում Կառավարության քաղաքականության իրականացման հիմնական ուղենիշները:

Պետք է փաստել, որ վերը նշված ոլորտային ռազմավարությունների մշակման հիմքում բացահայտ, ուղղակի եւ առերեսույթ դրված չեն եղել ԿԶՆ 16-ի ներքո ամրագրված թիրախներն ու ցուցիչները: Այնուամենայնիվ, այս ռազմավարական ծրագրերը հանդիսանալով բավականին ամբիցիոզ եւ հեղափոխական փաստաթղթեր՝ ոչ բացահայտ եւ անուղղակի կերպով կապվում են Գլոբալ նպատակի թիրախների եւ ցուցիչների հետ: Ինչու՞ անուղղակի եւ ոչ բացահայտ կերպով, քանի որ ազայնացման առաջնային եւ կարելորագույն մեխանիզմն իրագործված չէ՝ սահմանված չեն ԿԶՆ ազգային թիրախներ եւ ցուցիչներ, հետեւաբար ազգային ռազմավարական փաստաթղթերը լավագույն դեպքում կարող են անուղղակի եւ ոչ բացահայտ եղանակով հասցեագրել ԿԶՆ-երը: Օրինակ՝ ԿԶՆ 16.5.-ը՝ «Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով» անուղղակի կերպով հասցեագրում է Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրանից բխող

Գործողությունների ծրագրի հիմնական նպատակը եւ առաջնահերթությունը, ԿԶՆ 16.3.-ի՝ «Խթանել օրենքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար հասանելիություն բոլորի համար» իրագործմանն է ուղղված Դատական եւ իրավական բարեփոխումների ռազմավարության եւ Գործողությունների ծրագիրը: Միաժամանակ, Ազգային ժողովի կողմից ընդունված հակակոռուպցիոն պայքարի օրենսդրական մի շարք ակտեր, որոնցից կարելի է առանձնացնել «Ապօրինի գույքի բռնագանձման մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքները նույնպես անուղղակի կերպով հասցեագրում են Կայուն զարգացման 16-րդ Նպատակի թիրախներն ու ցուցիչները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկվում է առաջնային կարգով ազգայնացնել գլոբալ թիրախներն ու ցուցիչները եւ դրանք հասցեագել ինչպես գործող, այնպես էլ մշակման փուլում գտնվող ազգային ռազմավարական ծրագրերում, ինչի արդյունքում կապահովվի քաղաքականության իրականացման վրա ԿԶՆ-երի ռեալ եւ բացահայտ ազդեցությունը:

2.3.ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

Ազգայնացման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու եւ իրագործելու նպատակով անհրաժեշտ է այն դասակարգել որոշակի փուլերի: Այսպիսի դասակարգումը հնարավորություն կընձեռի հստակ պատկերացում կազմել կոնկրետ ԿԶՆ-ի հիմնական նպատակների, ուղղությունների, առաջնահերթությունների վերաբերյալ, հավաքագրել համապատասխան վիճակագրական տվյալներ, ազգայնացնել թիրախներն ու ցուցիչները, դրանք ամրագրել ազգայն ռազմավարական ծրագրերում:

Այսպիսով, ազգայնացման գործընթացի փուլերն են.

ՓՈԻԼ 1: ԿԶՆ ազգային խորհրդին կից ձեւավորել փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբ: Խումբը կիրականացնի ազգայնացման նախնական

աշխատանքները եւ արդյունքները կներկայացնի ԿԶՆ ազգային խորհրդի քննարկմանը: Նման խմբի ձեւավորումը կարեւորվում է այն հանգամանքներով, որ ԿԶՆ 16-ը ընդգրկում է դատաիրավական համակարգի գրեթե բոլոր ճյուղերը, որի շրջանակներում առկա են միմյանց հետ խաչվող մի շարք թիրախներ եւ ցուցիչներ: Միաժամանակ, գործընթացի արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է ապահովել նաեւ ներառականության սկզբունքը, ինչը հնարավորություն կտա մասնակցային եղանակով կազմակերպել եւ առաջ մղել գործընթացը: Աշխատանքային խմբի գործունեությունը պետք է համակարգվի ԿԶՆ ազգային խորհրդի կողմից:

Առաջարկվում է աշխատանքային խմբի կազմում ընդգրկել ներկայացուցիչներ ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, ՀՀ ոստիկանությունից, ՀՀ դատական դեպարտամենտից, ՀՀ կենտրոնական բանկից:

ՓՈՒԼ 2: Վերլուծել ազայնացման ենթակա ԿԶՆ-ի հիմնական նպատակները, գլոբալ ցուցիչներն ու թիրախները, ընդհանուր պատկերացում կազմել ԿԶՆ-ի առաջնահերթությունների եւ ուղղությունների վերաբերյալ: Եթե որպես օրինակ դիտարկենք ԿԶՆ 16-ը, ապա պետք է սկզբնական փուլում հասկանալ, թե որն է այս Նպատակի առաքելությունը եւ ինչ եղանակների միջոցով պետությունը պետք է հասնի այդ Նպատակի իրագործմանը: Այսպես, Կայուն զարգացման 16-րդ նպատակը կոչված է խթանելու խաղաղ եւ ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու եւ ներառական հաստատություններ: Այնուհետեւ, ցուցիչներն ու թիրախներն այն չափելի արդյունքներն են, որոնց միջոցով եւ օգնությամբ պետությունը պետք է հասնի գլոբալ Նպատակին: Օրինակ՝ թիրախ է հանդիսանում 16.1-ը՝ Զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը, իսկ ցուցիչ՝ 16.1.1-ը՝ Դիտավորյալ սպանությունների զոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի և տարիքի: Ավելի պրակտիկ էթե խոսենք, օրինակ՝ այսպես, ՀՀ-ն պարտավորություն

է ստանձնել ազգայնացնելու Կայուն զարգացման 16-րդ գլոբալ նպատակը, դա իրականացնելու համար անհրաժեշտ է ազգայնացնել համապատասխան թիրախը, օրինակ՝ 16.1-ը²⁵, իսկ դրա իրականացումը հնարավոր է չափել համապատասխան ցուցիչի կիրառմամբ, օրինակ՝ 16.1.1-ը²⁶:

ՓՈԻԼ 3: Վիճակագրական տվյալների հավաքագրում եւ վերլուծում: Այս փուլն իր էությամբ ամենաբարդն ու ամենաժամանակատարն է, սակայն այն գործընթացի համար ունի անկյունաքարային նշանակություն: Տվյալների հավաքագրման, համադրման, վերլուծման եւ կիրառման միջոցով է հնարավոր արդյունավետ կազմակերպել ազգայնացման գործընթացը: Այս համատեքստում, անհրաժեշտ է նախ բացահայտել ԿԶՆ 16-ի ցուցանիշների վերաբերյալ վարչական և վիճակագրական տեղեկատվության հավաքագրման մեթոդներն ու աղբյուրները ՀՀ պետական մարմիններում, վիճակագրական տվյալների առկա բացերը, ինչպես նաև գտնել հնարավոր լուծումներ: Միաժամանակ, անհրաժեշտ է ուսումնասիրել առկա վիճակագրական տվյալները, ԿԶՆ 16-ի ցուցանիշների հետ կապված տվյալների հավաքագրումը կարգավորող իրավական ակտերը, պետական գերատեսչությունների համապատասխան հաղորդումները և զեկույցները: Վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթացում հնարավոր է հանդիպել մի շարք խոչընդոտների, մասնավորապես, տվյալների հավաքագրման և փոխանցման գործընթացում ոչ միշտ են օգտագործվում տեխնիկական միջոցները, ինչն էականորեն բարդացնում է հավաքագրման գործընթացը, հավաքված տվյալների ավտոմատացված մշակման մեխանիզմները հաճախ բացակայում են:

Այս ամենին զուգահեռ, ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար ընդհանուր մարտահրավեր է այն, որ թեև ՄԱԿ-ի գլոբալ ցուցանիշների մեծ մասի դեպքում կա մշակված մեթոդաբանություն, դրանց վերաբերյալ տվյալներ գտնելու համար հաճախ հարկ է լինում համապատասխան հասկացությունների համարժեքը գտնել Հայաստանի օրենսդրության և պրակտիկայի մեջ (օրինակ,

²⁵ Զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը

²⁶ Դիտավորյալ սպանությունների գոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի և տարիքի

«հակամարտություններին առնչվող մահեր» կամ «դատավճիռ չստացած ազատագրկվածներ»): Այս դեպքերում փորձագիտական քննարկման և քաղաքական որոշման կայացման կարիք է առաջանում: Բացի այդ, որոշ ցուցանիշների դեպքում անգամ գլոբալ մակարդակի վրա դեռևս հստակ մեթոդաբանություն չի մշակվել, հետևապես դժվար է հստակեցնել դրանց վերաբերյալ տեղեկատվության հնարավոր աղբյուրներն ու մեթոդները: Միաժամանակ, հնարավոր են դեպքեր, երբ այս կամ այն ցուցանիշի վերաբերյալ ընդհանրապես վիճակագրություն չի վարվում²⁷, այս պարագայում պետք է համապատասխան տվյալները ձեռքբերել հարցումների միջոցով կամ դիմել նորարարական լուծումների օգնությանը՝ օրինակ ԿԶՆ ազգային կենտրոնին:

2019թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ եւ ԿԶՆ ազգային կենտրոնի աջակցությամբ մեկնարկել է «Օրենքի գերակայությունը և ԿԶՆ-ները Հայաստանի բարեփոխումների օրակարգում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն Կայուն զարգացման 16-րդ նպատակի ցուցանիշների վիճակագրության վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է ուսումնասիրության հիմնական եզրահանգումները.

Գլոբալ ցուցանիշներից հինգի դեպքում կա հավաքագրվող տեղեկատվություն՝

- 16.1.1 Դիտավորյալ սպանությունների գոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի և տարիքի,
- 16.3.2. Դատավճիռ չստացած ազատագրկվածները՝ արտահայտված որպես բանտարկյալների ընդհանուր թվի տոկոս,
- 16.6.1 Պետական առաջնային ծախսերը որպես սկզբնական հաստատված բյուջեի տոկոս
- 16.9.1 Մինչև 5 տարեկան երեխաների համամասնությունը, որոնց ծնունդը գրանցվել է քաղաքացիական մարմնի կողմից՝ ըստ սեռի,

²⁷ 16.1.4. Իրենց բնակության տարածքում մենակ քայլելիս իրենց ապահով զգացող բնակչության համամասնությունը

- 16.ա.1 Փարիզյան սկզբունքներին համահունչ ազգային անկախ իրավապաշտպան ինստիտուտների գոյությունը:

Եվս երեք գլոբալ ցուցանիշի դեպքում կան տվյալներ, որը կարելի է օգտագործել ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն դուրս բերելու համար.

- 16.1.2 Հակամարտություններին առնչվող մահերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի, տարիքի և պատճառի,
- 16.2.1 1-17 տարեկան երեխաների համամասնությունը, ովքեր անցյալ ամսում խնամատարների կողմից ենթարկվել են որևէ ֆիզիկական պատժի և (կամ) հոգեբանական ագրեսիայի,
- 16.2.2 Մարդկանց թրաֆիքինգի զոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով, ըստ սեռի, տարիքի և շահագործման ձևի:

Հինգ ցուցանիշի վերաբերյալ կան տեղեկատվության որոշ աղբյուրներ, և տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ կլինի որոշակի կարգավորումներ ներդնել պետական գերատեսչություններում, կամ էլ կան հետազոտական տվյալներ, որոնք որոշ չափով առնչվում են ցուցանիշին: Այդ ցուցանիշներն են՝

- 16.1.3 Բռնության ենթարկված բնակչության համամասնությունը նախորդ 12 ամիսների ընթացքում,
- 16.1.4 Իրենց բնակչության տարածքում մենակ քայլելիս իրենց ապահով զգացող բնակչության համամասնությունը,
- 16.6.2 Հանրային ծառայություններից վերջին անգամ օգտվելիս բավարարված բնակչության համամասնությունը,
- 16.7.1 Պաշտոնների համամասնությունը (ըստ սեռի, տարիքի, հաշմանդամություն ունեցող մարդկանց և բնակչության խմբերի) պետական հաստատություններում (օրենսդիր մարմին, հանրային ծառայողների, դատական համակարգ)՝ համեմատած ազգային բաշխվածությանը,
- 16.7.2 Որոշումների կայացման գործընթացի ներառականությանն ու զգայունությանը հավատացող բնակչության համամասնությունը:

Ցուցանիշներից երկուսի՝ 16.8.1-ի և 16.10.2-ի վերաբերյալ տվյալները հավաքագրվում են գլոբալ մակարդակով: Ցուցանիշներից մեկը վերաբերում է միջազգային կազմակերպություններում զարգացող երկրների անդամակցությանը, իսկ մյուսը՝ հանուն տեղեկատվության հանրային մատչելիության սահմանադրական, կանոնադրական և/կամ քաղաքականության երաշխիքների որդեգրող և իրագործող երկրների թվին:

Ութ ցուցանիշների վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ: Այս ցուցանիշներից որոշների հետ կապված, այնուամենայնիվ, կան առնչվող տվյալներ: Օրինակ, պետական պաշտոնյաների հետ շփում ունեցած անձանց այն համամասնությունը, որոնք կաշառք են տվել կամ կաշառքի պահանջ ստացել պաշտոնյաներից, կարող է բացահայտվել միայն հարցման միջոցով: Մակայն գերատեսչությունները վարում են կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրություն, որտեղ առանձին նշվում է կաշառք տալու, ստանալու և կաշառքի միջնորդության դեպքերի քանակը: Այս տվյալները թեև առնչվում են կոռուպցիայի ընդհանուր միտումներին, սակայն չեն կարող ճշգրիտ արտացոլել իրական պատկերը, քանի որ տեղեկացնում են միայն համապատասխան մարմիններին հաղորդված դեպքերի մասին: Թիրախի վերաբերյալ իրավիճակը հասկանալու համար թերևս ավելի նպատակահարմար կլինի ուսումնասիրել առաջարկված ազգային ցուցանիշը, այն է՝ կոռուպցիայի ընկալման համաթվի դինամիկան, որն արտացոլում է հասարակական կարծիքը կոռուպցիայի առկայության և միտումների մասին:

Ուսումնասիրության արդյունքներով փորձագետների կողմից ներկայացվել են մի քանի առաջարկներ Կայուն զարգացման 16-րդ նպատակի ցուցանիշների վերանայման և տվյալների հավաքագրման, ինչպես նաև պետական գերատեսչություններում համապատասխան տվյալների կառավարման գործընթացների վերաբերյալ: Դրանք են՝

1. ՄԱԿ-ի մեթոդաբանությանը համապատասխան՝ մշակել տվյալների հավաքագրման տեղայնացված մեթոդաբանություն, օգտագործելով Հայաստանի համար կիրառելի եզրույթներ և նշելով տեղեկատվության տեղական հնարավոր աղբյուրները:
2. Այն ցուցանիշների դեպքում, որտեղ կան վերաբերելի տվյալներ, մեխանիզմներ մշակել այդ տվյալների համակարգված և պարբերական հավաքագրման համար:
3. Հարցման վրա հիմնված ցուցանիշների դեպքում ապահովել տնային տնտեսությունների կամ այլ լայնածավալ հետազոտություններում համապատասխան հարցեր ներառելու հնարավորությունը:
4. Վերանայել ազգային ցուցանիշները՝ գլոբալ թիրախներին ու ցուցանիշներին համապատասխան հնարավորինս չափելի ցուցանիշներ ձևակերպելով և հաշվի առնելով երկրի իրավական դաշտն և արդի առանձնահատկությունները:
5. Մշակել տվյալների հավաքագրման համադրելի մեխանիզմներ կամ տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգեր, որոնք կբացառեն գերատեսչությունների կողմից տվյալների հավաքագրման և կամ մուտքագրման կրկնակի աշխատանքը: Օրինակ, կարելի է միասնական տեղեկատվական համակարգ ապահովել գերատեսչությունների համար՝ հնարավորություն տալով, որ տվյալները մեկ անգամ մուտքագրվեն համապատասխան իրավասություն ունեցող գերատեսչության կողմից, իսկ մյուսները կարողանան լրացնել տվյալները և կամ օգտագործել դրանք իրենց լիազորությունների շրջանակներում:
6. Տվյալների էլեկտրոնային բազաներ ստեղծել գերատեսչություններում՝ հնարավորություն տալով երկարաժամկետ կտրվածքով պահպանել և ավտոմատ կերպով մշակել հավաքագրվող տվյալները:
7. Վարչական ռեգիստրի միջոցով հավաքագրվող տեղեկատվության դեպքում համապատասխան ձևաթղթեր մշակել և ընդունել, որպեսզի ապահովվի

տվյալների կանոնավոր և կազմակերպված հավաքագրումը և պահպանումը: Մյուս կողմից, գերատեսչություններում տվյալների կառավարման այնպիսի համակարգ ներդնել, որը կապահովի արդեն իսկ հավաքագրված և կամ մշակված տվյալների պահպանումը՝ անկախ համապատասխան իրավական ակտի կամ ձևաթղթի առկայությունից:

ՓՈԻԼ 4: Վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա ազգային թիրախների և ցուցիչների սահմանում: Այս փուլի ընթացքում հիմք ընդունելով համապատասխան վիճակագրական տվյալները և համապատասխան ներքին իրավակարգավորումները՝ անհրաժեշտ է սահմանել ազգային թիրախներ և ցուցիչներ՝ այսպիսով իրագործելով ազգայնացման գործընթացը: Այս համատեքստում, ազգայնացման գործընթացն առավել պարզ և հստակ ներկայացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ փորձենք օրինակի հիման վրա ցույց տալ այդ գործընթացը: Այսպես.

Թիրախ 16.1 Զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը

Ցուցիչ 16.1.1 Դիտավորյալ սպանությունների զոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի և տարիքի

Նախ որպես ընդհանուր դիտարկում՝ ելնելով օրենսդրական շրջանակից, ՀՀ համար կիրառելի է՝ «սպանությունների զոհերի թիվը», քանի որ «դիտավորյալ սպանություն» եզրույթ ՀՀ օրենսդրության մեջ չի օգտագործվում: Այս պարագայում արդեն Ցուցիչի մեջ համապատասխան ձևակերպումը պետք է փոխարինել՝ հիմք ընդունելով ազգային օրենսդրության կարգավորումները: Այնուհետև, անհրաժեշտ է պարզել թե արդյոք ՀՀ պետական մարմիններն ու գերատեսչությունները հավաքագրում են համապատասխան վիճակագրություն, այն է՝ *Դիտավորյալ սպանությունների զոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի և տարիքի*: Այս գործընթացի բարդությունը կայանում է նրանում, որ ՀՀ-ում վիճակագրական տվյալների համակարգը ոչ այնքան միասնական է, շատ ժամանակ բացակայում են

Էլեկտրոնային պլատֆորմները, ինչը հնարավորություն չի ընձեռում օնլայն ռեժիմով ստանալ համապատասխան տվյալներ եւ այլն: Այնուամենայնիվ, այս պարագայում անհրաժեշտ է հարցումներ ուղարկել պետական մարմիններին եւ գերատեսչություններին՝ պարզելու թե՞ արդյոք այդ մարմինը հավաքագրում է այդպիսի տեղեկատվություն թե ոչ: ՄԱԶԾ-ի եւ ԿԶՆ կենտրոնի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում փորձագետները եկել էին այն եզրահանգման, որ նմանօրինակ տվյալներ հավաքագրում են ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ վիճակագրական կոմիտեն: Այս համատեքստում խնդիրը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է հիմք ընդունել միայն մեկ պետական մարմնի կողմից ստացված տեղեկատվությունը եւ դա դնել ազգայնացման հիմքում: Վերը նշված ծրագրի փորձագետներն առաջարկում են Ոստիկանությունում «Տուժողի քարտի» ներդնումից հետո այս ցուցանիշի տվյալի համար որպես հիմք ընդունել ոստիկանության վիճակագրությունը՝ որպես ավելի մոտ իրականությանը, և ներկայացնել դրանք ըստ սեռի ու տարիքի տարաբաժանված տեսքով:

ՓՈԻԼ 5: Ազգայնացված թիրախների եւ ցուցիչների հաստատումը ԿԶՆ ազգային խորհրդի կողմից: Ազգայնացված թիրախներն ու ցուցիչները պետք է ներկայացվեն ԿԶՆ ազգային խորհրդի հաստատմանը:

ՓՈԻԼ 6: Ազգայնացված թիրախների եւ ցուցիչների հասցեագրումը ռազմավարական ծրագրերում: ԿԶՆ ազգային խորհրդի կողմից ազգային ցուցիչներն ու թիրախները հավանության արժանանալուց հետո դրանք պետք է իրենց արտացոլումը ստանան համապատասխան ոլորտային ռազմավարություններում եւ գործողությունների ծրագրերում: Այս պահանջի լիարժեք կատարման համար անհրաժեշտ է, որ այն լինի իրավական ակտի տեսքով եւ ունենա իմպերատիվ բնույթ: Այս պարագայում, առաջարկվում է մշակել համապատասխան իրավական ակտ, օրինակ՝ ՀՀ վարչապետի կամ Կառավարության որոշում, որում արտացոլված կլինեն բոլոր ազգային ցուցիչներն ու թիրախները, եւ որը ենթակա կլինի պարտադիր

կատարման պետական մարմինների համար իրենց ոլորտային ռազմավարական ծրագրերը մշակելու ընթացքում:

Ամփոփելով ազգայնացման գործընթացի փուլերը, կարող ենք փաստել հետևյալը.

առաջին` անհրաժեշտ է ձեռավորել ոլորտային աշխատանքային խմբեր, **երկրորդ`** վերլուծել ԿԶՆ հիմնական ուղղությունները ու առաջնահերթությունները` անհրաժեշտության դեպքում փոփոխելով Ցուցիչի կամ թիրախի ձեւակերպումները` այն համապատասխանեցնելով ազգային օրենսդրության կարգավորումներին, **երրորդ`** ձեռքբերել, վերլուծել, համադրել անհրաժեշտ վիճակագրական տվյալները, **չորրորդ`** այդ վիճակագրական տվյալների հիման վրա սահմանել ազգային ցուցիչ` օրինակ մինչեւ 2030թ սպանությունների գոհերի թիվը X հազար բնակչի հաշվով` ըստ սեռի և տարիքի կրճատել X քանակով, **հինգերորդ`** ազգայնացված ցուցիչներն ու թիրախները ներկայացնել ԿԶՆ ազգային խորհրդի հաստատմանը, **վեցերորդ`** դրանք արտացոլել ազգային ռազմավարական ծրագրերում` իրականացումն ապահովելու նպատակով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանը, հանդիսանալով միջազգային իրավունքի սուբյեկտ եւ ՄԱԿ-ի լիիրավ անդամ, հանձնառություն է ստանձնել մինչեւ 2030թ. իրագործել Կայուն զարգացման նպատակները: Գաղտնիք չէ, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից պանդեմիա հռչակված նոր կորոնավիրուսի տարածումն իր բացասական ազդեցությունն է թողնելու գլոբալ մակարդակում ԿԶՆ-երի արդյունավետ իրագործման վրա: Այդուհանդերձ, այս նոր իրավիճակը հնարավորություն է ստեղծում բոլոր պետությունների եւ կառավարությունների համար վերաարժեւորելու եւ վերագնահատելու Կայուն զարգացման նպատակների հայտնի կարգախոսը՝ *ոչ ոք չպետք է անտեսվի*: Այս կարգախոսը կյանքի կոչելու, մարդու իրավունքները եւ ազատությունները պաշտպանելու, գլոբալ մարտահրավերներին դիմագրավելու եւ վերջապես կայուն զարգացման նպատակներին հասնելու համար՝ պետությունները պետք է էլ ավելի միավորեն իրենց ջանքերը եւ հանդես գան միասնական ճակատով: Այս նոր իրողությունները, անշուշտ, ստեղծել են այդ հնարավորությունը: Այս համատեքստում, Հայաստանը չի կարող անմասն մնալ գլոբոլ մակարդակում տեղի ունեցող իրադարձություններից: Ինչպես երկրագնդի վրա առկա համարյա յուրաքանչյուր երկրի դեպքում, կորոնավիրուսը ծանր հետեւանքներ է թողնելու նաեւ մեր պետության կայուն զարգացման վրա: Ուստի, ներկա իրողությունները հաշվի առնելով՝ էլ ավելի է կարեւորվում ԿԶՆ-երի դերն ու նշանակությունը: ԿԶՆ-երը ուղղակի ազդեցություն ունեն մարդկանց կյանքի որակի բարելավման վրա, վերջիններս շոշափում են մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներն ու ուղղությունները:

Այս ամենը հաշվի առնելով՝ սույն հետազոտությունը հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է օր առաջ մեկնարկել ԿԶՆ-երի ազգայնացման գործընթացը, սահմանել կոնկրետ ուղղություններ եւ առաջնահերթություններ, դրանք

հասցեագրել ազգային ռազմավարական ծրագրերում: Այս գործընթացի պատշաճ եւ ճիշտ կազմակերպման արդյունքում կբարելավվի մարդու կյանքի որակը, կձեւավորվի իրավունքահենք պետական քաղաքականություն՝ հիմնված հստակ վիճակագրական տվյալների վերլուծության վրա:

Սույն հետազոտությունը նպատակ էր հետապնդում աջակցություն ցուցաբերել ԿԶՆ ազգայնացման գործընթացի քաղաքականության պատշաճ եւ համապարփակ կազմակերպմանը եւ իրագործմանը: Այդ աջակցության հիմքում դրված էր մինչ օրս տեղի ունեցած գործընթացների խոչընդոտների ու բացթողումների, ինչպես նաեւ ազգայնացման գործընթացի կազմակերպման եւ իրագործմանն ուղղված վերլուծությունը: Այդ վերլուծությունը զուգորդված էր հստակ առաջարկություններով, որոնք կարող են կիրառվել ազգայնացման գործընթացի սուբյեկտների կողմից: Հուսով ենք, որ սույն հետազոտությամբ բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները պատշաճ արձագանքի կենթարկվեն շահագրգիռ բոլոր մարմինների կողմից, որոնք ներգրավված կլինեն ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացում: